№ 184 ՏԱՐԵԿԱՆ ՏԱՐԻ, 21 Հոկտեմբերի, 1893 Հոկտեմբերի, 21 Հինգշաբթի ՏԱՐԵԿԱՆ ՏԱՐԻ, № 184

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐԹԱՆԱՎԱՆԴ

Տարեկան 10 րուբլի, կէս տարւոյ 6 րուբլի, երեք ամսւոյ 3 րուբլի 50 կոպ.
Փոխադրութեամբ 1 րուբլի, հասոյթ 5 կոպէկ։
Բաժանորդագրութիւնը ընդունւում է միայն խմբագրութեան մէջ։
Ձեռագրերը չեն վերադարձւում։
Յայտարարութիւնները ընդունւում են խմբագրութեան մէջ։

Հրատարակչատուն հաստատեց Տիգրանը։ Redaction „Hor-Ajr“ Հրատարակչատուն և տպարանը Ներսիսեան դպրոցի շէնքում։
Տիգրիս։ Tiflis.

Յայտարարութիւնները ընդունւում են տպարանում։ Ցանկացողները կարող են յայտարարութիւնները ուղարկել փոստով։
Յայտարարութեան գինը 1 տողի համար առաջին անգամ 2 կոպ., իսկ յետոյ 9-րդ տպելու (թող տան օրերը) մինչև 2-րդ անգամ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱՏՎԱԿԱՆ

Փետրվար, 20 Հոկտեմբերի 1893 թ.

ԻՆՉ ԱՍՑԱՑ Ի ՊԵՏԵՐԲՈՒՐԳ

— Ներքին գործոց նախարարութիւնը հրամայել է Պետերբուրգի քաղաքագլխապետին, որ թերթերին չարգելուի տպագրել այն լուրերը, որոնք վերաբերում են Պետերբուրգի ներքին կեանքին։ Ասում են, թէ այդ հրամանը տրուել է այն պատճառով, որ Պետերբուրգի թերթերը շատ յաճախ են տպագրում այնպիսի լուրեր, որոնք ստացւում են ոչ թէ պաշտօնական աղբիւրներից, այլ մասնաւոր անձերից։ Ինչպէս յայտնի է, Պետերբուրգի թերթերը ստանում են իրենց լուրերը գլխաւորապէս Telegraphen Agentur-ից։ Այդ հրամանը ստանալուց յետոյ Պետերբուրգի քաղաքագլխապետը հրաւիրել է Telegraphen Agentur-ի տնօրէնին և նրան յայտնել է, որ ինչքան էլ ինքը ցանկանայ, որ Պետերբուրգի թերթերը ստանան իրենց լուրերը Telegraphen Agentur-ից, բայց նա չի կարող թոյլ տալ, որ Telegraphen Agentur-ը տպագրի այնպիսի լուրեր, որոնք վերաբերում են Պետերբուրգի ներքին կեանքին։ Ինչպէս յայտնի է, Telegraphen Agentur-ը ստանում է իր լուրերը Պետերբուրգի գերմանական դեսպանատնից։

— Ռուսական կառավարութիւնը ուզում է ամրացնել Ռուսաստանի հարաւային սահմանները։ Ասում են, թէ Կովկասի զօրքերի հրամանատարը հրամայել է Կարսի, Ախալքալաքի և Ախալցխայի գաւառներում ամրացնել այն տեղերը, որոնք կարող են ռազմական նշանակութիւն ունենալ։ Ասում են, թէ Կարսի ամրութիւնները պիտի ընդարձակուին։ Ինչպէս յայտնի է, Կարսի ամրութիւնները շինուել են 1878 թուին։ Ռուսական կառավարութիւնը ուզում է ամրացնել նաև Ալեքսանդրապոլի գաւառի Գյումրի գիւղը։ Ասում են, թէ Գյումրիում պիտի շինուի մի մեծ ամրոց։ Ռուսական կառավարութիւնը ուզում է ամրացնել նաև Ալեքսանդրապոլի գաւառի Գյումրի գիւղը։ Ասում են, թէ Գյումրիում պիտի շինուի մի մեծ ամրոց։

—

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ

(Բոլոր իրաւունքները պահպանուած են)

ՅԱՏՈՒԱԾ ԹՈՒԹԻՒՆ

Ը

ՅՈՒՆՎԱՐԻ 1893 ԹՎԱԿԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ

ՅՈՒՆՎԱՐԻ 1893 ԹՎԱԿԱՆԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Ա. Ե. Ի՞նչ է ասում, թե չորս տարի հետո

Ի՞նչ է ասում, թե չորս տարի հետո ամեն ոք կունենա իր տունը, իր ագարակը, իր այգին, իր ընտանիքը, իր ապահովությունը, իր ապագան։

պայմանների մէջ է գտնում Մեկքան և նրա ջուրը։

Այս մասին անգլիական կառավարութիւնը քանից բողոքել է. վերջերս բանն այնտեղ հասաւ, որ անգլիական կառավարութիւնը յայտնեց Թրքական կառավարութեան, որ նա կ'արգելէ Հնդկաստանից մահմեդականներին Մեկքայի ուխտաւորները Մեկքայից վերադառնալով խոլերան տարածում են ասիական երկրներում։

Այժմ Թրքական լսարերի տեսլով՝ սուլթանն ի նկատի առնելով Մեկքայի հակառողջական պայմանները և հիւանդ ուխտաւորներին պատսպարելու ու խնամելու համար եղած հիւանդանոցի սակաւութիւնը, քանի որ մի հիւանդանոց կայ, իսկ հաղարաւոր ուխտաւորներ մնում են առանց խնամքի և ընդհանրապէս առողջակեցութեան մասին գրեթէ ոչինչ հոգացուած չկայ և այդպիսով, տարափոխիկ հիւանդութիւն յայտնուելով, ամբողջ երկիրը և ուխտաւորները վտանգուած են, հրամայել է հիմնել մի երկրորդ և մեծ հիւանդանոց Մեկքային մօտիկ մի առողջ տեղում. նոյնպէս կանգնեցնել մի մեծ քարվանսարայ (հիւրանոց) Մեկքի մօտ ամեն յարմարութիւններով, որ կարողանայ իւր մէջ պատսպարել 600 ուխտաւորներ։ Այդ հիւրանոցը հիմնուել է յատուկ այն չքաւոր ուխտաւորների համար, որոնք միջոց չունին բնակարան վարձելու և բնակութեան տեղ չեն կարող գտնել։ Պիտի հիմնուի նոյնպէս բժշկանոց, որ առանց վարձի պատսպարուր է խնամել հիւանդներին։ Բայի այդ ամենը, վեհ. սուլթանը կարգադրել է, որ Մեկքա ուխտաւորին առողջակեցիկ պայմանների մէջ դնելու համար ամեն հարկաւոր միջոցներն անյապաղ պէտք է գործ դնուին։ Լինելիք չինութիւնների համար ծախք հաշուած է 3 միլիոն րուբլի, որ սուլթանը իւր մասնաւոր կարողութիւնից ուզում է վճարել։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՈՒՐԵՐ

—

—Գերմանական բայխստագի առաջիկայ նստաշրջանն սկսուելու է նոյեմբերի 21-ից (Ն. ս.)։ Առաջ քան թէ բայխստագը կրքննէ պետութեան տարեկան նախահաշիւը, նրա քննութեանը կատարելու Սպանիայի, Ռումինիայի և Սերբիայի հետ կապելիք առևտրական դաշնագրերի նախագծերը։

—Անգորայում ռուսաց հիւպատոսութիւն հաստատելու տեղեկութիւնն անախորժ և վատ տպաւորութիւն է թողել Բերլինում «Kolnische Zeit»-ի, որ երբեմն-երբեմն հրահանգներ և ազդարարութիւններ է ստանում գերմանական պետական կանցլեր գրաֆ Կապրիվիից, այդ առթիւ յայտարարում է, որ չնորհիւ ռուսաց այն ձգտման, որով կամենում են նորանոր իրաւունքներ ձեռք բերել արևելքում, արևելեան հարցը կարող է նորից սուր կերպարանք առանալ։

—Ֆրանսիական «Temps» լրագիրը Իտալիայի նախագահ մինիստր Զիօլիտիի Պրոներում խօսեցած ճառի առթիւ նկատում է, թէ ինչ նոր նախագծեր, ինչ նոր օրէնքներ ու հարկեր էլ որ ստիպեն իտալական կառավարութիւնը, գարձեալ Իտալիայի անտեսական ճգնաժամին վերջ չի դրուիլ մինչև որ Իտալիայի արտաքին քաղաքականութիւնը չվերանայ։ Սակայն խօսքով, «Temps» ի կարծիքով, Ֆրանսիան կընդունակէ իւր անտեսական կռիւն Իտալիայի հետ մինչ այն ժամանակ, մինչև որ վերջինս կամ վերջնականապէս չմիանայ Ֆրանսիայի հետ և կամ մինչև բոլորովին չանջատուի։

—Իտալական ազգային ժողովն իւր առաջիկայ նիստերն սկսելու է նոյեմբերի 23-ին (Ն. ս.)։ Ազգային ժողովը բացուելուց անմիջապէս պիտի նախագահ Զիօլիտտին ազգային ժողովի քննութեան կատարելիք մի չորք օրինագծեր, որոնց քննութիւնն անյապաղ կատարելու համար պիտի կոչ անէ նա։

—Սաքսոնիայի թագաւոր Ալբերտը, որ գերմանական զօրաբանակի ընդհանուր տրամանատարն է, ներկայումս տանում է իւր զինուորական ծառայութեան յանձնականը։ Դեկտեմբերի սկզբներից չնորհաւորում են նրան։ Ալբերտ թագաւորը, որ այժմ 66 տարեկան է, լինում քաջառողջ է։ Լրագիրները, չնորհաւորելով նրա յոբելեանը, ասում են, որ պատերազմի ծագած դէպքում նրան վիճակուած կլինի մեծ դեր խաղալ պատերազմի դաշտում, իբրև փորձուած զօրապետ։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՄԱՐԻԻ, 19 հոկտեմբերի.—Սպանացիների մարերի հետ ունեցած բնդհարումն և վերջիններիս իտալական Մելիլ քաղաքի բերդապահ զօրքի հետ մղած կռիւն օր աւուր սուր կերպարանք է ստանում։ Բերդապահ զօրքի հրամանատար գեներալ Մարչալան սպանուած է։ Կորուստն երկու կողմից էլ մեծ է։ Սպանիայի ժողովուրդը խիստ յուզուած է այդ առթիւ։ Պալատի հանդարտասիրական փոքրամասնութիւնը, Պի-Մարգալի նախագահութեամբ ժողով կազմելով, վճռեց, որ՝ աչքի առաջ ունենալով տեղի ունեցող անցքի լրջութիւնը՝ պէտք է այդ մասին դիմել պարլամենտի առաջիկայ ժողովին, որի չուտափոյթ գումարումն անխուսափելի և անչափ անհրաժեշտ է։

ԲՈՐՍԱ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 հոկտեմբերի

—

Մուրհ. կուրսը, 3 ամսով, Լոնդոնում 10 ֆ. ստեռ. հաւասր 95,85 սակ.
Ռուբլին 100 մարկ. 46,62½ —
Պարիզ 100 ֆրանկի. 37,80 սակ.
Մուրհ. կուրսի տրամադրութիւնն ամսոյ ընթ.
Նոր կտրած պղտմզ. . . . 7,65 սակ.
Մաքսային կտրոնը (100 մետաղ րուբլոն).
. . . . . 153½ սակ.
Արծաթը . . . . . —
Բորսային փղոջը . 5½ մինչև 7½%
Գետ. բան. Ս. հրատ. 5% տոմս. 102⅝ սակ.
2-րդ . . . 102¼ սակ.
1883 թուի 6% ոսկեայ լինար. 155¼ սակ.
1884 թուի 5% — — 161½ առք.
Սրևելեան 2-րդ փոխ. 100 և 1000 րուբլեանոց 5% Ռ. հրատ. 101 սակ.
,, ,, ,, Գ. հրատ. 102 սակ.
1864 թ. Ս. Ներքին փոխառու. վճահատ. 5% տոմսեր . 242 —
1866 թ. Ռ. ,, ,, 218 սակ.
Արքունի երկաթուղային լինար 102⅛ —
Ներքին փոխառ. 4% I սերիան 93⅝ —
,, ,, II սերիան 93⅜ առք.
,, ,, III սերիան 93⅜ —
,, ,, IV սերիան 93⅜ սակ.
4½% երկաթուղ. փոխ I հրատ. 99⅛ առք.
,, II հրատ. 1893 թ. 99⅛ առք. և 1893 թ. փոխառութեան . . . . . 99⅛ առք.
Ագն. կալ. բան. 5% զրաւթ. 100⅜ սակ.
,, ,, 4½% — 98½ առք.
Արք. ագն. կալ. բան. 5% վճահատուութեան տոմսերը . 192⅜ սակ.
4½% չինական հող. բանկի վկայ. 98½ առք.
Հարաւ-Արևմտեան երկաթուղ.
4% օբլիգացիան . . 92½ ծախ.
Մոսկուա-Փրազանի . . 91 առք.
Փրազան-Ռիբալի . . 98 —
Կուրսկ—Կիևի . . . 98 —
Կալ. փոխադ. վարկի ընկերը.
4½% ընկեր. զրաւաթղթերը 154¾ —
5% . . . . 100¼ —
Պետերբուրգի քաղ. վարկի ընկ.
5% օբլիգացիան . . . 100½ սակ.
Մոսկուայի . . . 100⅛ առք.
Օդեսայի 5½% . . . 100½ սակ.
Թիֆլիսի . . . . 98½ ծախ.
Լիհատատանի կալ. բանկի 5% զրաւաթղթերը . . . 100½ առք.
Եկատերինոսլաւի կալ. բանկի 5% 5½ զրաւ. թղ. 100¾ առք. 99¼ —
Խարկովի կալ. բանկի 5% . 99¾ սակ.
Պալատայի . . . 99¼ առք.
Տուլայի . . . 99¾ սակ.
Կիևի . . . 99⅞ սակ.
Մոսկուայի . . . 99⅝ առք.
Բհատարիա—Տաւրիկեան . 99⅜ սակ.
Նիժն.—Սամար. . . 99⅝ առք.
Դոնի . . . . 99 —
Վիլնայի . . . 99 —
Թիֆլիսի 5% և 6% . 160 առք. 99 ծախ.
Քաթթալիսի . . 100 — 99 —
Ակցիաների գները . . 461 սակ.
Միջազգային առևտրական . 470 առք.
,,Արտ. առևտր. ռուս. բանկի . 292 սակ.
Վոլգա-Կամայի առևտրակ. . 870 առք.
Սիբիրի բանկի. . . 650 առք.
Բհատարտ.—Տաւրիկ. . 550 —
Խարկովի կալուածական . 490 սակ.
Պետերբ.-Տուլայի . . 408 առք.
Պալատայի . . . 590 —
Նիժնզորոդ.-Սամարայի . 630 ծախ.
Վիլնայի . . . 518 առք.
Դոնի . . . . 715 ծախ.
Կիևի . . . . 770 առք.
Մոսկուայի . . . 585 —
1827 թ. կրակից տապահովագ. առաց. ընկերութիւն . . 1190 —
Հիւրս. տպահովագ. ընկ. . 264 —
,,Ռոսսիա'' ,, ,, . 303 ծախ.
Ռուսաց Նաւագնացութեան և առևտրի ընկերութիւն . 690 առք.
,,Կատկով և Մ-ի'' ընկ . 390 —
Ռուս. երկաթ. գլխ. ընկերը. . 243 —
Մոսկուա-Բրեստի երկաթ. . 462 —
Կուրսկ-Կիևի . . . 374½ սակ.
Ռըբինսկ-Բալդոգի . . 81¼ —
Գրիազ-Ցարից. . . 159 —
Հարաւ-Արևմտեան . . 110¾ —
Բորսայի տրամադրութիւնը խաղաղ է։

Խմբագիրը—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

Երկաթուղի

Թիֆլիսից Բաթում է գնում մարտական № 2 գնացքը առաւօտեան 9 ժ. 30 ր.՝ և Բաթում հասնում է երեկոյեան 9 ժ. 45 ր.։

Թիֆլիսից Բաթում է գնում № 4 պոստային գնացքը, երեկոյեան 6 ժ. 50 ր.՝ և Բաթում է հասնում առաւօտեան 8 ժ. 15 րոպէին։

Թիֆլիսից Բագու է գնում պոստային № 3 գնացքը՝ ցերեկը ժամը 1-ից 20 ր. անց։

Բաթումից գուրս է գալիս մարտական № 1 գնացքը առաւօտեան 9 ժ. 45 ր. անց, իսկ *Թիֆլիս* է հասնում երեկոյեան ժամը 9-ից 52 ր. անց։

Բաթումից գուրս է գալիս պոստային № 3 գնացքը գիշերուայ ժամը 11-ից 25 ր. անց, իսկ *Թիֆլիս* է հասնում կիրակի ժամը 12-ին 25 ր. անց։

Բագուից պոստային № 4 գնացքը գուրս է գալիս գիշերուայ ժամը 11-ից 10 ր. անց և Թիֆլիս է հասնում երեկոյեան ժամը 5-ից 50 ր. անց։

Պատային կապերի

Երեթևեկութիւնը Թիֆլիսի և Վլադիկաւկազի միջև մայիսի 1-ից սկսած մինչև նոյեմբ. 1-ը։

—

ԹԻՖԼԻՍԻՑ գուրս է գալիս

Առաւօտեան ժամը 7-ին հինգ հոգու տեղ ունեցող կաբրիօլը, գիշերում է Մլեթում և միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկաւկազ։

Առաւօտեան ժամը 9-ին հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Պասանաուր կայարանում և միւս օրը երեկոյեան ժամը 10-ին հասնում է Վլադիկաւկազ։

Երեկոյեան ժամը 3-ին վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուսը). առանց գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Վլադիկաւկազ։

Երեկոյեան ժամը 5-ին վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը առանց գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում է Վլադիկաւկազ։

—

ՎԼԱԴԻԿԱՒԿԱԶԻՑ գուրս է գալիս

Առաւօտեան ժամը 7-ին հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Մլեթում և միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Թիֆլիս։

Առաւօտեան ժամը 9-ին հինգ հոգու տեղ ունեցող կարետը. գիշերում է Պասանաուրում և միւս օրը երեկոյեան ժամը 9-ին հասնում է Թիֆլիս։

Երեկոյեան ժամը 3-ին, վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը. առանց ճանապարհին մի տեղ գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 7-ին հասնում է Թիֆլիս։

Երեկոյեան ժամը 5-ին, վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը. առանց ճանապարհին մի տեղ գիշերելու միւս օրը երեկոյեան ժամը 8½-ին հասնում է Թիֆլիս։



Երթևեկութիւնը մայիսի 8-ից սկսած.

ԱՓՐԱՆԵՔԱԿԻՐ ՄԱՐՏԱՅԻՆ ԳԻԾ

Բաթումից գնում է ուրբաթ օրերը երեկոյեան ժամը 6-ին և հանդիպում է բոլոր նաւահանգիստները։

Բաթում գալիս է հինգշաբթի օրերը, կէս օրուայ մօտերքը։

Փոթից գնում է Օդեսա՝ ուրբաթ օրվ դարձերը վերջացնելուց յետոյ։

և Փոթից գնում է Բաթում՝ հինգշաբթի օրերը, առաւօտեան ժամը 9-ին։

Փոթի գալիս է՝ երեքշաբթի օրերը ցերեկը Օդեսայից։

Ապրանքակիր-մարդատար շոգենաւերում ընդունուող II և III կարգի ճանապարհորդները կերակրուելին չեն առնում։

—

ԲԱԹՈՒՄԻՑ գուրս է գալիս դէպի ՕԴԵՍՍԱ

Շաբաթ օրը՝ լոյս կիրակի, ժամը 2-ին, շրջանառու ընթացքով մտնում է բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրը՝ գիշերուայ 11½-ին, ճամպլեթայ նաւը և մտնում է միայն Batum Steamship։

Երեքշաբթի օրը՝ գիշերուայ ժամը 2-ին, շրջանառու ընթացքով, մտնում է բոլոր նաւահանգիստները։

Հինգշաբթի, ցերեկը ժամը 12-ին, ուղիղ գծով, Նովոռոսիյսկի և Կերչի վրայով։

Երկուշաբթի, երեկոյեան ժամը 7-ն, ուղ է գնում դէպի Ն. Պօլիս՝ երկու շաբաթը մի անգամ։

ՕԴԵՍՍԱՑԻՑ գալիս է ԲԱԹՈՒՄ

Ուրբաթ օրերը՝ երեկոյեան, շրջանառու ընթացքով, բոլոր նաւահանգիստներն է մտնում։

Ուրբաթ օրերը՝ առաւօտեան, ճամպլեթայ, Batum և Սևաստոպոլ հանդիպելով։

Երկուշաբթի երեկոյեան, շրջանառու ընթացքով, մտնում է բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը՝ առաւօտեան, ուղիղ գծով, Նովոռոսիյսկի և Կերչի վրայով։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

BATEAUX A VAPEUR FRANCAIS A. PAQUET ET Cie

ՆԱՒԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

„Ն. ՊԱՔԷ ԵՒ ԸՆԿ.“

Կանոնաւոր և ուղիղ երթևեկութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը երկու չաբաթը մի անգամ, յունուարից սկսած և ԲԱԹՈՒՄԻՑ ՄԱՐՍԷԼ։

Բաթումից Մարսէլ գնալիս մտնում է Տրապիզոն, Սամսոն և Կ. Պոլիս քաղաքները։

Բաթումից Պարիզ ուղիղ հաղորդակցութեան առտնականները ամենայն պիշամն ունին։

Բաթումից մեկնում է՝
Մօտաւորապէս նոյեմբերի 3-ի (15-ին) և այդպէս երկու չաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրուայ։

Որովհետև ձեռք առնուած կարանտինային միջոցների պատճառով կարելի չէ նախօրօք ճշտիւ որոշել չոգենաւերի Բաթումից մեկնելու օրերը, ուստի այդ մասին տեղեկութիւններ ստանալու համար թոյլ բարեհաճեն դիմել հետևեալ գործակալներին։

Բաթումում—պ. ՎԻԿՏՈՐ ԴԱՐՆՈՅԻՆ, Նաւերեւոյթ։

Թիֆլիսում—պ. ԲԱՐԵՍԵՆԴԱՆՑԵԱՆԻՆ, Սիօնի փողոց, քարուանատան գետնայարկում։

Բաթումում—պ. Սամուէլ Դիլդարեանին, Կալիբատակինակայա հրապարակ։

Նովոռոսիյսկում—պ. ԼՈՒԻ ՕՒՆՈՅԻՆ։

Ձեռնպահ ցանկացողները կարող են ստանալ մանրամասն տեղեկութիւնները թէ ճանապարհի ծախքի և թէ Հաւերից չգենաւի մեկնելու ժամանակի մասին

(262) 20—4

„Վ.ԱՃԱՌԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԱՏՏԱՀԱԿԱՆ ԻՐԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆԸ ՇԱՐՈՒՆԱԿԻՈՒՄ Է“

Ա. Ի. ՍԻԼԻՆԻ *ածուխի արտադրութիւն*, **ՄՈՍԿՈՒԱ**, *պատուոյ* **ՍՈԼՈԴՈՎՆԻԿՈՎԻ**, *մուտքը* **ՆԵԳԼԻՆՆԻՑ**։

Լիակատար կահաւորանք, բրոնզ, երամշտական գործիքներ, նկարներ, ոսկի, արծաթ, հագուստներու մեծ ընտիր, զանազան ժամացոյցներ եւ ուրիշ աւելի տեսակ իրեր։

(M) 4—1.

Дозв. Цензурою Тифлисъ 20-го Октября 1893 г. Տպարան և Վիմագ. Ա. Մելիք-Շահնազարեանցի. Типо-Лит. А. Меликъ-Шахназаріанца. Воронц. Набережн., д. Григорьянъ Арм. Приход. Школы.